



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>






ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱՐ

ՈՒՂԵՑՈՅՑ

ՄՐԲԱՋԱՆ ՏԵՂԵԱՑ



=rat mutiwn kam u; hetsoyots...

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱՐ

ՈՒՂԵՑՈՅՑ

ՍՐԲԱՋԱՆ ՏԵՂԵԱՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԵՀՄԻԱՃԱՆԻ

S. S. ԳԵՂՈՐԳԱՑ

ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԿՐԱԺԱՆԱ

ՊԱՏՐԻԱՐքԻ ՍՐԲՈՅՑ ԵՐՈՒՆԱՑՆ

S. ԵՍԱՑԵԱՑ


ՍՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒՄ

ԵԿ

Ի ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԵԱՆ Կ. ԳԵՂՈՐԳԱՑ

S. ՄԿՐՅՉԻ

ՍՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒՄ



ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

ՍՐԲՈՅՑ ՅԱԿՈՎԼՔԵԱՆՑ

—(1872)—


Grad
EREN
324
BUHR

ՀՐԱ
EREN
324
1.11.99

Ա. Զ. Դ.

Լերկած հրատարակութիւնը—Պատրիարքութեան կամ
Թէւ Եթուց և Ցեղաց կամ պարունակէ իւր մէջ առ-
ղագրական և պատմական ժանօթութիւնը հին ու-
նոր յիշատակաց և անցկց որոնք քաղուած են հա-
մազդի և ոտարազդի յիշատակաբաններէ և խնամնվ
կարգաւորուած 'ի հմտութիւն բարեպաշտ ուխտա-
ւորաց և ամեն հարցասեր ընթերցողաց ։ Հետեւա-
պէս կենդանի առաջնորդ մ'է առ որով կարէ ըն-
թերցողն թէ անձամբ և թէ մոռօք շբջագոյիլ զա-
զեստինի մէջ և գոհացուցիչ առզեկութիւններ ըս-
տանալ ամեն առզեաց ։ Հնութեանց և ազգաց սեպ-
հականաւթեանց վրայ։

Այդ՝ աշխայիսի մի երկասիրութիւն 'ի վաղուց
անտի բաղձալի եր թէ մեզ և թէ շատերուն ուստի
և յուսով եմք որ ներկայ հրատարակութիւնն լը-
րուան ընելով բազմաց բաղձանաց ։ հաճութեամբ
կընդունուի և կը քաջալերուի ընթերցող հրատարա-
կութիւնն ։



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱՌ

ՈՒՂԵՑՈՅՑ

ՍՐԲԱԳԱՆ ՏԵՂԵԱՅ

Ուխտաւորք ի Յովոյէ, եւ աւցեւաբռւթիւն Խցու
դեղ ի ընկացէ:

ԵՐՈՒՍԱԼԵՄ ուխտի եկող տէ-
րունական ուխտաւորք, որ ծովային ճա-
նապարհորդութեամբ կ'ընեն իրենց ու-
ղեգնացութիւնը, նախ Յոպակէ կուգան
և յետոյ անտի յլօրուսաղէմ կ'ելնեն:
Յոպակէ ծովահայեաց ու ամփիթատրոնի
ձեւով շնուռած քաղաք մի է, որու մէջ
օթեւան կամպանդոկ չկայ Ճանապար-
հորդաց համար, և իւրաքանչիւր ազ-
գաց ուխտաւորք՝ իրենց ազգային վան-
քերուն մէջ կ'իջեւանեն:

Եւյա քաղաքը աշխարհիս հին քա-
ղաքներէն մէկը կը համարուի: Եւան-

դութեանց նայելով՝ ջրհեղեղէն առաջ
եւս իւր , Այս իւր Տապանը այս քա-
զաքիս մէջ շնուց , և ջրհեղեղին ժամա-
նակ քաղաքը քանդաւելով , և անոր Յա-
բէթ որդւոյն ձեռօք վերստին շնոււելով
նորա անունն եւս ստացաւ :

Յովիան մարգարէն Տիրոջը ձեռ-
քէն խոյս տալու համար , (որ իրեն կը
պատուիրէր Նինուէ երթալ քարոզե-
լու համար ,) այս քաղաքս եկաւ , ուր-
էն նաւը մանելով դէպ ՚ի Թարախս կը
փախչէր : Տիւրոսի Քիրամ թագաւորը
ի իրանանու լեռնէն կտրել տուած
փայտերը այս տեղ նաւէն դուքս հա-
նեց՝ Աղոմնին խրկելու , որոնք ճշմար-
տին Կատունց Տաճարին շնոււթեանը
գործածուեցան :

Այս քաղաքիս մէջ Ա. Պետրոս առա-
քեալը յարոց Տարիթան . և դարձեալ
Հոս Ախմօն խաղաղորդի առնը մէջ տե-
սաւ սուրբ և անառուք անանց տեսի-
լը : Այս տանը տեղը մինչեւ ցայսօր կը
մնայ քաղաքին մէջ և ծովեզեքէն քիչ
մը ներս է , որու մէկ մասը Տաճար և
մի փոքր մասն ալ չայստ կը վերաբերի :
Յոպպէի նաւահանգիստը միայն մէկ

նաւամստոց ունի, այն է մաքսատանը.
 ուր պարտաւոր են ելնել ամեն ճանա-
 պարհորդք: Ա'քսատունէն ելնելով դէպ
 'ի ձախ կողմը կ'ինմի Յունաց, լատի-
 նաց և Հայոց վանքերը կորդաւ: Հա-
 յոց վանքը սուրբ Նիկողայոսի անուամբ
 մատուռ մի ունենալով, նորա անուամ-
 բը կը միշտի. ունի իրեն առանձին լար-
 դապետ Տեսուչ (ըեփչ) մի, ժամարար
 մի, և քանի մի միտքանք, թարգման
 և խռախճի, որով ուխտաւորաց հաս-
 նելուն մեծ իմաստը և զգուշութիւն ցոյց
 կուտան վոտանդ մի չպատահելու: Ուխ-
 տաւորը քոնի մի օր սոյն վանքիս մէջ
 կ'անցընեն, և իրենց 'ի բնէ անտի սո-
 վորական եղած դարպաս անունավ սուր-
 բը կը վճարեն թէ՛ {չուպակէի և թէ՛ Ուկ-
 էի վանուց համար: Ոյն սուրբ Նիկո-
 ղայոսի վանքին մէջ մեծն Կափոլէնն Ա-
 հաստատեց իւր զինուորաց համար հի-
 ւանդանոցը, ուր պատռպարուեցան
 ժանտախաէ բռնուտղները, և բնքը Կա-
 փոլէնն ստէպ կուգար անոնց այցելու-
 թեանը. այս տեղս ընդարձակ սրահ մ'
 էր օր իբր հոգէառւն կը ծառայէր, խակ
 հիմակ խուցերու բամեաւած է:

Յուղապէի մէջ 6000 էն աւելի բնակիչ
կայ, որոնց մէծ մասը մահմետական են,
Հայոցմէ հազիւ թէ 40 հոգի կը հաշուիր
Վաճառականութիւնը բաւական բա-
նուկ է և գրեթէ առ հասարակ քրիս-
տոնէից ձեռքն է :

Յուղապէէն մինչեւ Երուսաղէմ մէկ
օրուան մէջ հասնելու համար, պէտք
է ձի հեծնալու մէջ բաւական վարժ ըլ-
լալ, և լաւ ձի մը ունենալ. վասնզի 10
ժամէ աւելի հեռաւորութիւն ունի :
Այս պատճառաւ սովորութիւն եղած
է նախ Ուէմլէ հանդիպիլ և գիշեր մի
հոն մնալ և առաւօտ կանուխ ճամբայ
ենել : Վաղարի դռնէն դուրս ելնելն
յետոյ, ճանապարհը շուկայի մը մէջէն
է, ուր զանազան տեսակ բերքերով լե-
ցունէ, այսինքն, նարինջ, լեմոն, նուռ,
ադամաթուզ, շաքարեղէգ և այլն, աշ-
նան՝ ձմեռուան և գարնան ժամանակ
ները : Խսկ ամառուան մէջ եղածներն
են, լեմոն, ձմեռուկ, գօնալ, խաղող,
թուզ, թութ, և ամեն տեսակ բան-
ջարեղէն՝ զորոնք ծախողներն են ձերմակ
և սեւամորթ արաբացիներ : Այս շու-
կային ճանապարհը այնպէս խոնած է

անցուղարձով, որ պէտք է ձիով անցնելու ժամանակ խիստ զգոյշըլլալքան մի չկորանցնելու և կոիւ մը չպատճառելու։ Ա աճառատեղիէն յեայ կէս ժամու չափ երկու կարգ պտղաւէտ պարաէզներու մէջէ կ'անցնուի, և այս պարաէզներուն ծայրն է Աարօնի դալարագեղ դաշտը, որ խիստ պտղաբեր տեղեաց մին կը համարուի։ Եյս դաշտը փոխանակաբար՝ տարի մը առատ հունձ կուտայ և միւս տարին անմշտկ մնալով գեղեցիկ արօտ կը բերէ երկիրը, դարնան մէջ անհամար ծաղիկներով կը ծածկուի քրոդուհւայ մը ձեռքով հիւսուած խալիչայի նման, որոնց մէջ կը գտնուին կակաչ և հարանուկ։ Այն դաշտը անուանի է Աամփասնի յիշատակովն, ուր տեղ Փղատացւոց հունձերը այրեց նա, 300 աղուէս թողով նոցա մէջ՝ որոնց ագիներուն վառած ջահեր կապած էր Աարօնի դաշտին մէջ տեղն է Աէմիշ գիւղաբաղաբը, որ Յոպպէէն Յժամէ՝ դէպ'ի արեւելք։

Աէմիշի 40 րոպէ մնալով կը տեսնուի Լիւդ քաղաքը, որ և Դիոսպոլիս կը կոչուէր, ուր տեղ Պետրոս առա-

քեալ բժշկեց Անա անուն անդամաց
լոյծը⁽¹⁾ : Ա. Գևորգոս ծննդեան քաղաք
քըն է և Նիկոմիդիոց մէջ նահատակ
ուելէն յետոց հոս փախադքուեցան նորա
նշխարքները , և Յուստինիանոս կայսրը
փառաւոր եկեղեցի մի չենեց յանուն
սրբացն : Այսն Եկեղեցւոյն մէջ եղաւ 414
թուին ժողով մի ընդգէմ Պեղագիսի ,
որ կ'ուրանար սկզբնական մեղքը և
աստուածային շնորհաց պիտանաւորու-
թիւնը : Ժամանակէ յեայ Ա' ահմետա-
կանք տիրելով քաղաքին Աալահտանի օ-
րով , Եկեղեցին կարծանեցին , որուն մէկ
մասք միայն կանգուն կը մնայ և միւս
աւերակ մասին վայ մզկիմք և ժնաբէ
մի կայ : Այսն Եկեղեցւոյ տեղւոյն հա-
մար քանի մի տարի է վէճ կար Յու-
նաց և Լատինաց միաբանութեան մէջ ,
որոնք իւրաքանչիւր կը պնդէին իրենց
սեփական լինել . վերջապէս Յոյնք աջռ
զեցան իրենց իրաւունքն յայտնել և տի-
րելով տեղւոյն ակսան նորագութիներ ընելը

6800 ի չափ թնակիչ ունի , որոնց մեծ
մասք մահմետական են , և 2000 ի չափ
Յոյն , և քանի մի Լատին :

(1) Գործք . թ . 52—53 :

ԹԻԵՄԼԵ

Ուշմէ է հին Արեմաթիա ըսուածք,
որ էր Հայրենիք Յազսեփայ և Նիկողե-
մոսի, որոնք Քրիստոսի մարմինը պա-
տելով գերեզմանին մէջ գրին : Ուշմէի
կից է Քառասուն Տանկանց աշտարակը, ո-
րոնք Աերաստից մէջ նահատակուեցան,
և հին ժամանակ եկեղեցի էր : Գաւի-
թին մէջ տեղը փոքրիկ մզկիթ մի կայ,
և աշտարակին ծայրը կ'ելնուի 113 առ-
տիճանով :

Ոչի՞ն դարուն մէջ բաւական չէն
բաղաք էր՝ պարոպապատ և 12 դռնով.
իակ այսօր աղտեղի և աւերակներով լե-
ցուն փողոցները կ'երեւին, ՚ի բաց ա-
ռեալ երեք ազգաց վանքերը :

Հայոց վանքը չինուած է սուրբ Գիշ-
որդայ անուամբ, որուն նուիքուած է
փոքրիկ մատուռը : Այսն վանքիս մէջ գի-
շեր մի կը հանգստանան ուխտաւորը
թիւ նոր եկած և թէ յետ դարձած ժա-
մանակնին : Անփ Տեսուչ վարդապետ
մի և թարգման՝ հանդերձ քանի մի մի
արանով : Ավտուաւորը հոս եկած ժա-
մանակնին դարպատական ողբարձութիւն

մեն տար, ըստ որում՝ Յոպակէ տուին
երկուսը մէկտեղ։ Քանի մի ժամ միայն
հանգստանալէն յետոյ գիշերով ճանա-
պարհ կ'ենեն ուխտաւորք դէպ յի-
րուսաղէմ ուղեւորելու, որ 7 ու կէս
ժամու չափ ճանապարհ է։

Ուղեւորանիւն ՚ի առաջին Երուաղէմ

Վ անքէն մեկնելով և 10 րոպէ քալե-
լով գերեզմանատունը կը համուտի, ուր
կէ կրօկախ դարձեալ Այածոնի գեղեցիկ
ու բարեբեր դաշտը։ Ասկէ մինչեւ Եղ-
Պերրին գիւղը որ աջ կողմը կ'ինինի,
22 րոպէ է, ճանապարհին կամուրջէ մի
կ'անցնուի, և տեղ տեղ աջ կոմ՝ ձախ
դին կ'երեւին պահապանաց աշտարակ
ներ, որոնք Խրէտիա փաշային ժամանակ չի-
նուեցան ուղեւորաց ապահովութեան
համար։ 7 րոպէ եւս յառաջելով՝ ձախ
դին կ'երեւի լնապէ ըստած տաճկաց
գիւղը, և 30 րոպէին բարձր բլրի վրայ
Առա շաղէ ըստած լիւլին և ձախ դին
ուրիշ նիւղէ մի քաջր— Դապ անուն հին
գիւղի մի աւերասկներով պատաճ, յե-
առ կը համնիք Եղ-Քուպաղ գիւղը,

որ ձախս դին կ'ինմնի : Այն գիւղիս սարադաշտէն վար իջած տեղը Արօնի դաշտին ալ վերջին մասն է . ասկէ դէպ յարեւելք լերան սառոտը կ'երեւի Պէյր-Նուպա , որ Եթիմելելք քահանայալետին հայրենիքն էր , նու որ Դաւթի մատոյց Եռաջաւորաց հացը :

Վերջիշեալ սարադաշտէն վար կամուրջի մի վրայէ անցնելով և 44 րոպէ յառաջ գնալով՝ աջ ձեռքի վրայ կը հան դիպի պզտի աղբիւրակ մի և բլուր մի՛ որու վրայ է | ադրուն ըսուած կիսաւերակ գիւղը : Եւանդութեամբ կ'ըսուի թէ հոս էր եգիպտացի Դեմաս անուն՝ բարի աւազակին բնակարանը : Այն բլրին քով կը վերջանայ Արօնի դաշտը և կրսկսին Յուղայաստանի լեռները :

| ագրունէն իբր ուժ՝ րոպէ՝ ձախ կողմն է հին Եմմասուար . այս քաղաքս շատ պատերասղմներ տեսնելով , յետոյ Վեսպանիանոս կրկին շննելով Նիկոպոլիս անսւանեց : Երոր մէջ դեռ կը տեսնուի խիստ հին եկեղեցւոյ աւերակ մասեր յանուն եօմն Վակարայեցւոց :

Եսկէ շարունակելով ճանապարհը
29 վայրինան , պահապանաց երկու աշ

տաղումկ կը հանդիպին , և ձևնապարհին
վրայ տեղ տեղ ջրի ակեր կը գտնուին .
երկրորդ աշուարակինքովնը , որ ձախ
կողմը կ'ինսկնի , ջրհար մի կայ որ Պէտ-Լյուս
կ'ըստի : 5 րոպէ եւս յառաջ՝ կամուրջ
մի կայ , ուսկէ անցնելով ձախ դին բար
ձրրկեկ տեղւայ մի ծայրը հին ու երեսի
վրայ թողուած տուն մի կը տեսնուի ,
այն է Տէր-Լյուս ըտածը , որ կը նշա-
նակէ Յօրայ վանքը : Ասկէց 17 րոպէ
կը տեւէ Պատ-Շատի (Ճորադուռ) ուր
աջ կողմը խրճիթ մի կոյ իրեւ սրճա-
րան , ուր սովորաբար ուխտաւորք կ'իջ-
նենք մը հանդիսա առնելու և տուրք
մի խմելու :

Արձանացէն ելնելով անմիջապէս կը
մանենք Յուղացատանի լուներունկիր-
ճը (պողով) , և երկու շարք լերանց մէջէն
42 րոպէ քալելով Արդի գիւղի ձիթե-
նաստանին մէջ կ'ելնենք , լերան ոորը .
աջ դին ջրի պղտի ակ մի կոյ Լյու-
ս ամիեն կոչուած , բայց ջուրը շատ
լաւ չէ : 20 րոպէէն կը հասնինք Լյուսուրը
սած գիւղը , և անկէ Յօրոպէ ալ քալելով
կարիամ - ել - ենապ (իւազողոց գիւղը)
կուգանք , որ աջ կողմի բլրին ծայրը

Ժնուած է : Այս գիւղը որ միւսներուն
քով աւելի նշանաւոր է . Այսուզա՞լ կը
կոչուի վաթսուն տարիին ՚ի վեր է , իւր
մէկ Շեխին անուամբը , որ երեւելի էր
իւր բռնութիւններովը և վանքերուն
տուած զնամներովը , ուխտաւորաց վը-
րայ անցատութք դրած էր և շատ նե-
ղութիւն կուտար անոնց : Խպրահիմ
փառայ 1830ին ասոր ուժը խորտակեց , և
հիմակ սոյն Շեխին սերունդը յետին
չքաւորութեան մէջ էն :

Այս գիւղը հին կարիաթարիմն է ,
Յուդայի ցեղին մէջ ։ Այս տեղ Ամի-
նադարսայ տանը մէջ մնաց Տապանակը ,
Փղշտացիք իրենց քովէն հեռացընելէն
յետոյ : Ամէի օրգի Աւրիա մարդարէն
կարիաթարիմէն էր , որ սոյն քաղաքին և
երկրին դէմ կ'ուղղէր իւր մարդարէու-
թիւնները , և Յավակիմ աքքայն սպան-
նել տուաւ գինդը⁽¹⁾ :

Այս գիւղիս մէջ հին եկեղեցւոյ աւ-
երամիներ կան , և շատ ամիս չկայ Առու-
տաց տէրութիւնը ինդրելով ։ Դրա-
նէն ստացաւ ՚ի պարգեւ՝ իւր ագդին
համար : Եւ կը յուսացուի որ քիչ ժա-

(1) Երեսիա 12. 20:

Ճանակէն կրտկուին թէ՛ եկեղեցին վերա^ւ
կանգնել և թէ վանք մի չխել։ Հին
եկեղեցին կառուցեալ էր յանուն լըրե-
միա մարդարէի ։

Ապուղօշն անցնելով, աջ դին բար-
ձր լերան փայ կը տեսնուի հին Առվ-
գիիմը, որ հիմակ Արտա կը կոչուի,
Ա'ակաբայեցւոց հայրենիքը. այս տեղ
Ը մաւօն Ա'ակաբէ ծնողացը և եղարց
գերեզմաններուն վկայ եօթը բուրգ
կանգնեց։ Կան ոմանք որ Առվգիիմը
աւելի հաւանաբար ի իւդի արեւե-
լեան կողմը երկու մղսն հեռու Ա'էրի-
էն ըսուած տեղը կը դնեն, ուր կրնար
Ա'իջերկրական ծովին ալ տեսնուիլ յի-
շեալ բուրգերը, ինչպէս առաջնոյն հա-
մար կ'ըսեն, որ անհաւատավի է ։

Ապուղօշէն 17րոպէի չափ հեռանա-
լով կամսւրջի մի վրայէ կ'անցնուի, հոն
մօտերը աջ դին փոքր աղքերակ մի կայ
Ե՞յ-Տիլ, եւ ձախ դին է բարձրկեկ
գետնի վրայ Պեյր-Արտադ գիւղը։ Ճա-
նապարհին քանի մի աննշան հնուժիւն-
ներն ՚ի բաց թողլով և լեռնաձորերու-
մէջէ անցնելով՝ բարձր տեղ մի կ'ելնուի
ուսկէ կը տեսնուի Նեղի-Ամուելը, այն

է հին Հռամաթայիմը, Այսուել մարդարէի հայրենիքը։ 10 բոպէ քալելով՝ աջ կողմը հեռուանց կ'երեւի Յովհաննու ծննդեան գիւղը, Եյն-Քերիմ, ուր մեր այցելութեան ժամանակ պիտի տեսնենք։ Եսկէ եւս 20 բոպէ դէպ ՚ի յառաջ երթալով կը հասնինք Քալունիկ ըսուած գիւղը, որ ձախ գին լերան սարուար շինուած է։ գիւղին և ճանապարհին մէջտեղը գեղեցիկ ձոր մի կը տեսնուի սրու մէջ կան կիորոնի, լեռնի, նարնջի և սերկեւիլի ծառեր, այս գիներ ու ձիթենիներ, և վեց ջրի ակեր կ'ուոգանեն, որոնց մին ճանապարհին վայ ձախ կողմն է և բաւական ջուր ունի։ Հոն կ'երեւի հին գիւղի մի և աշտարակի աւերակներ։

Քանի մի քայլ ալ յառաջ երթալով քարաշէն կամուրջի մի կը հասնինք Դերեպինթ ըսուած հեղեղատին վայ շինուած, ուր տեղաց Դաւիթ 5 քարերը ժողվեց Դողիաթու դէմ կուուելու իւր պարսատիկով, և այն ձորին մէջ զինքը սատակեց։ 35 բոպէ աւելի անգին գար ՚ի վեր ճանապարհին վան աջ կողմը աշտարակ մի և ձախ կողմը

լերան մի ստորոտք Պէցիլ-Խաչա գիւղը
 կը տեսնաւի, եւ անկէ քիչ մի անդին
 նոյնպէս ձախ կողմն է Ա իջտայի ձորը
 և անոր մէջ Ա իջտա գիւղը, որ ջրի
 աղբիւրակ մի ունի : Շաբաւնակելով
 Ճանապարհը 11 րոպէ, ձախ կողմը պա-
 հապանաց աշտարակ մի կը հանդիպի,
 և կըսկսին այս տեղաց արեւելեան կող-
 մը Ա . Ճամբարձման լեռը և աջ դին
 Խաչավանքի ձորը երեւալ : Եւ երկրորդ
 աշտարակ մի եւս հասնելնուս Երու-
 սաղէմը կ'երեւի : Ճ'անապարհին երկու
 կողմը ամառատուններ են և ուսում-
 նական ու մարդասիրական հաստատու-
 թիւններ, որոնցմէ վերջը կը տեսնուի
 Որուսաց նօրաշչն մէծ վանքը, որու-
 մէջէ նաեւ հիւպատոսարանը, և 1858
 წն սկսելով 4 տարուան մէջ լացաւ :
 Ճախ կողմերնիս թուղով զայն և քիչ մ'
 ալ յառաջդնալով կը հասնինք սրճարան-
 ներու առաջը՝ որու ծայրն է մաքսա-
 տունը, ուր հարկ է կանգ առնել, և
 ըստ սովորութեան աչքէ անցընելտալ
 ջորիներուն բեռները : Եւ յետոյ քա-
 ղաքը մտնել Յոպպէի ըսուած դռնէն,
 որ մաքսատան դիմացը կը բացուի :

ԵՐՈՒՍԱՆԵՄ

Երուսաղեմ քաղաքը, բաց 'ի իւր
 պատմական դէպքերէն, որովք բոլոր
 ազգաց առջեւ երեւելի եղած է, նաև
 մասնաւորապէս սուրբ համարուած է
 քրիստոնէից համապ, վասն զի այս քա-
 ղաքիս մէջ Տէրն մեր (Խսուս Քրիստոս
 աշխարհի փրկութիւնը կատարեց : Ե-
 րուսաղեմայ բնակչաց թիւը կրնայ հաս-
 նիլ քանն և չորս կամ քանն և հինգ հա-
 զարի, որոց երեք մասին մէկը կը բազ-
 կանայ Հրէաներէ, միւսը Տաճկիներէ
 և երրորդ մասը այլ և այլ ծէսէր ունե-
 ցող քրիստոնէաներէ : Հայ ժողովուդոց
 թիւը չորս հարփւրի հազիւ կը հասնի
 Աւխտաւորք, ինչպէս լսինք, (Յուպ-
 պէի դռնէն ներս մտնելով՝ աջ կողմի
 ընդարձակ փողացը կ'առաջնորդուի . ու
 բաղպականաց ժողովարանին և զօրանո-
 ցին առջեւէն անցնելն յետոյ, Ճանո-
 պարհը կը նեղնայ, և կամարի տակէ
 անցնելով շիաակ սուրբ Յակոբայ վա-
 նուց հայակապ գրան առաջը կը հանէ :
 Եեքս մտնելավ վանքին Հիւրինկալ վար-
 դապետը, կամնա չգտնուած ժամանակ

սենեկապանը (օդապալին) կ'առաջնորդէ
զիրենք դէպ ՚ի հոգեւտունը, ուր վայր
կեան մի հանգստանալէն և սուրճ մի
խմելէն յետոյ իւրընկալ վարդապետը
կ'առնու կը տանի զիրենք յեկեղեցին և
սուրբ Կայիշածին անունով եկեղեց
ւոյն դունէն ներս մանելով կարգաւ կը
նատին եկեղեցւոյ մէջ, ուր Կարպասըն
կալ վարդապետը բարեպաշտ ուխտաւ
ւորացմէ Կայսարի անուամբ մասնաւոր
աղորմութիւնը ընդունելէն յետոյ, աւ
նանց անուանիքը դարպասական տօմարին
մէջ կ'արձանագրէ . և պահպանիչ ասե-
լով կը խրկէ զանոնք սուրբ Յակոբայ
եկեղեցին, ամեն մէկին ձեռքը երեքաւ
կան մոմեր տրուելով, և լլ. Կայսարի
առջեւ ծնկան վրայ կարգաւ կը շար-
ւին Այն ժամանակ կը ականա անմիջապէս
դասին մէջէն Արդւոց որոտման բաղը
շարականը երգելու, և վարդապետաց
մէ մին շուրջառաւ սուրբ Ասեփաննո
սի մատուռէն դուրս կ'ենէ ինձկարկելով
և Կայսարի մատուռը կը մտնէ, և դէպ
՚ի ուխտաւորաց դառնալով համառօտ
ծանուցումով մի նոցա դալուստը շնոր
հաւորելով, և իւրեանց Ճանապարհոր-

դութեան նպատակը որքան սուրբ և
նաւիրական լինելը յայտնելով կը յորդու-
թէ զիրենք ջերմեռանդ ոգւով ներկայ
անալու թէ՛ ի սուրբ Դվարագիր և թէ
բոլոր անօրինական սուրբ տեղիքը։ Եւ-
տոյ երկրպագել տալով նոցա սուրբ ե-
կեղեցւոյն մէջ գտնուած սրբազն խո-
րանները, կ'առնու կը տանի Հիւրընկալ
վարդապետը՝ ի սեղանատուն։ ուր աեղ
կերակրուելէ յետոյ կը բերէ դարձեալ
՚ի Հոգէ տուն, ուր աեղ նոյն գիշերն
հանգիատ կ'առնուն։

Հետեւեալ առաւ-օտուն՝ Դարպաս-
ընկալը քանի մի պատուաւոր վարդա-
պետներով Դարպասատուն կ'ենէ, ուր
կը հրուտիրուին քարեպաշտ ուխտու-
ւորը իրենց մեծ ու զիսաւոր դարպա-
սական սզրմութիւնը չնորհելու սուրբ
Ծմուռոյ + Ծմելորդէ ըսել թէ սոյն ու-
զորմութեան տրոց վրայ կը կայանոյ
գիսաւորապէս սուրբ Ծմուռն հաս-
տափութիւնը և ուայծառութիւնը,
վասնորոյ քարեպաշտ ուխտաւորը կան-
խաւ կը յարդարուին Դարպասատուն
Ծնդամոյ կաղմանէ, որ չմնոյեն իրենց
հոգեւոր ոզրմութիւնը աննախանձա-

սար նուիրելու և իրբեւ ազգային ան-
դամ ազգային վանուց պիտոյից ձեռլին-
տու լինելու։ Յետ այնորիկ իւրաքան-
չւր ուխտաւորաց իրենց արժանաւո-
րութեանը եւ թուղն համեմատ սե-
նեակներ կը տրուին։

ՍՈՒՐԲ ՑԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԸ

Պատմական

Երուսաղէմայ առաջին և գլխաւոր
սրբավայրը, որ բոլոր քրիստոնէից և իւ-
տագնացութեան միակ նպատակը կը
համարուի. Տեառն մերոյ Յիսուսի Քր-
իստոսի ։ Գերեզմանն է, Ա. Յարու-
թիւն ըսուած հոյակապ տաճարին մէջ։
Այս տաճարիս մէջ վեց այլ և այլ ազգեր
աստուածային պաշտամանց արուրողու-
թիւն կը կատարեն, իւրաքանչիւր ազգ
ըստ իւր եկեղեցական կարգաց։ Այս
ազգերն են՝ Հայք, Ա ատինք, Յոյնք,
Վ պտիք, Հապէշք և Ասորիք։ Առջի
ըստ ազգերը իրենց սեպհական մա-
տուռներէն զատ, ունին նաեւ բնա-
կութեան ուղի սցն տաճարիս ներքին

կողմբ , վասն վի դուռը հասարակօրէն
 փակ կը մնայ և անոր բանալիները դրա-
 նապան Տաճկացքով կը պահուին : Այս
 տեղ բնակող կրօնաւորները չեն կրնար
 ըստ կամաց իւրեանց անկէ դուրս ել-
 նելու . և դուրս գտնուողներուն հետ
 մեծ դրան վրայ եղած փոքր դըռնա-
 կէն միայն հաղորդակցութիւն կրնան
 ընել , ուսկէ ներս կը տրուին նաեւ իւ-
 րաքանչիւր ազգի միաբանաց օրական
 կերակուրը : Հայք , Ա ատինք , Յոյնք
 և Դ պտիք միայն իրաւունք ունին Ո .
 Դերեզմանի Ճակարին վրայ և ներսի կող-
 մը կանթեզներ վառելու , նայնպէս պա-
 տանատեղւոյն վրայ և մնացած մասե-
 րուն մէջ այլ և այլ պատկերներու առ-
 ջեւ : Առջի երեք ազգաց Տեսուչ վար-
 դապետները երբ որ կ'ուզեն՝ իրաւունք
 ունին սրահաննջել նոյն դռնապան Տա-
 ճիկներէն որ Ո . Քարութեան տաճա-
 րին գուռար բանան , իրենց հանդիսա-
 ւոր տօն օրերուն և ուրիշ պէտք եղած
 պարագաներու մէջ : Այս դրան բաց-
 ման համար փոքրիկ տուրք մի որոշուած
 է , որ կը վճարուի դռնապանաց՝ դուռը
 բանալ առւող միաբանութեան կողմէն :

Ո. Գերեզմանին վրայ պատարագ մասուցանելու իրաւունքը միայն չայ, Յոյն և լ ատին կրօնաւորաց սեպհականուած է : Ո. Գերեզմանին ծառայող կրօնաւորները իւրաքանչիւր աղդ իւր եկեղեցական պաշտամունքները կը կատարէ իրեն սեփական եղած մստրան մէջ, և իւրաքանչիւր Աւխտաաեղեքը թափօրին պտղունելու և աղօթելու սովորութիւն ունեցողներն, ինչպէս են չայք և լ ատինք, անխոափան կը կատարեն՝ բաց ՚ի հանդիաւոր մեծ թափօրներէն, չայք ամեն ուրբաթ, շաբաթ և կիւրակէ երեկոյները, իսկ լ ատինք ամեն երեկոյին կը կատարեն հասարակ թափօրը : Աւանդութիւնը մեզ կ'ուսուցանէ որ նախկին Հրէաստանը Ադամին բնակութեան տեղին եղաւ, որ վաղվաղակի հոն ասլուստանեցաւ երկրաւոր դրախտէն արտաքսուելէն ետքը. նա և սոյն երկիրս ընդունեց նախահօր մարմինը, որուն գլուխը թաղուեցաւ այն առեղս որ կոչուեցաւ կրանիօն (Cranion) որ կը նշանակէ առեղի գագաթման, այնէ Գաղգոթմայն (Կյառակութիւնը մեղ ուսուցանողն է Ո. Քարսեղ :

Որագինէս , Ա . Եպիփան , Ա . Հերոնի
մաս և այլք : Քիսուս թաղուեցաւ մերձ
՚ի Գողդոմիա , և յետ երից աւուրցյա-
րեաւ մահսւան զօրութեան յազմե-
լով : Քրիստոնէութիւնը հսկացաքայլ
յառաջադիմութիւններ ըստաւ . Գող-
դոմիան և Գերեզմանը ուսկից Աստու-
ծոյ Արդին յարութիւն առաւ , մեծ յարգ
և պատիւ կ'ընդունէր նորընծայ հաւա-
տացեալներէն : Տիառա կայարը Երու-
սալէմը պաշարելու եկած ժամանակ ,
Յակովը առաքելոյն յաջորդը՝ Աիմէոն
կամ Շմաւոնի , որ այն ժամանակ սուրբ
քաղքին եպիսկոպոսապետնէր քրիստո-
նէից հետ Յորդանանէն անոյին Շելլա
քաղքին մէջ ապաստանեցաւ . և պա-
շարումէն վերջը Երուսաղէմոյ աւե-
րակնեցը , Գողդոմիան և Ա . Գերեզ-
մանն ժառանգելու համար վերադար-
ձաւ , որոնք սկսան կրկին պատիւ ու-
յարգ գտնել : Ա . Գերեզմանի մայր ե-
կեղեցին , որ երկրորդ անգամ⁽¹⁾ Հեղինէի
և ազդէացն Կրատանդիանոսի և մեր Նոր-

(1) Առաջին անգամ ուուրբ առ վերը շնորհու պահ-
պահութեան հայու Արդարու կին գշխոյն Հեղինէ և Տե-
՛ր ձեռադիք քննչընքնէ պատմոթեան մեջում :

գատայ ձեռօք շինուեցաւ, շատ ան զամ ամբողջ և կամ մսանաւոր կործանումներէն յետոյ, վերջին անգամ՝ (1868) մեծ գմբէթը նորոգուեցաւ ()սմանեան տէրութեան շնորհիւ և հանգանակութեամբ և խնամքը Որուսիոյ և Գաղղիոյ կառավարութեանց, և կըսուի թէ երկու միլիոն ֆրանք ծախք գնաց :

ԱՐԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի պահադ սուրբ Յարութեան :

Տէրունական ուխտաւորաց սենեակները բաժնուելէն յետոյ՝ նոյն երեկոյին շիւրընկալ վարդապետը կ'առնու կը տանի զիրենք ՚ի Ա. Յարութեան տաճարը ուկսու և երկրպագութիւն մատուցանելու : Կախ կը ներկայանան Տեսչին, եւ ըստ սովորութեան իրենց դարսասական ողորմութիւնը նուիրելէն յետոյ, որ է ՅՅ դահեկանն, տեղայն ժամարար վարդապետներէն մին և կամ

(1) Սցին ողորմութեան արօք կը հոգացուի սուրբ Յարութեան տաճարին մշտավառ կանգնելուն իւղը, մոմք և ուրիշ զանազան պիտոյ բները :

ուրիշ վարդապետ մի շուրջնառազգեստ,
թափօքի տետրակ և մամ 'ի ձեռքին, նոյն
պէս սարկուագ մի շապիկով սաղաւարտ
'ի գլուխ և բուրվառաւ և երկու կերու
նակիր գալիքներով և գտնաւած վարդա-
պետներով թափօքի կ'ելմէ հանդերձ
ուխտաւորօք, և բոլոր սրբազնն տե-
ղիքն ումասաւուները կը չքայեցընէ,
իւրաքանչիւր տնօրինական տեղւոյն հա-
մեմատ սուրբ Աւետարանք կարդալով,
և համառօտ ծանուցմամբ տեղեկացը
նելով ուխտաւորաց Յիսուսի Քրիստո-
սի նոյն տեղւոյն վկայ կատարած փրկա-
գործ խորհուրդն և յորդաքերով պարեա-
պաշտ ժողովաւրդը 'ի ջերմնառանդու-
թիւն և երախտագէտ զգացմամբ լե-
ցընելով նոցա սկրտերը Ուրեմն սկանք
տեղագրել իւրաքանչիւր սուրբ տեղւ-
որ պրոնք սուրբ Յսրութեան տաճարի
չքազատին մէջ բովանդակուած են, նոյն
կարդաւ որով 'ի թափօք կ'ելմեն մերա
մինք :

Ա. Չորրորդ իսկաք : 'Եախ սուրբ Վե-
րեզմանի և լաաինաց եկեղեցւոյն առ-
ջւահեն անցնելով և դէպ 'ի աջ գին ծը-
ռուելով կ'երթան առաջն որբավայրը

որ ձափո դին կ'ինկնի, որ է Քրիստոսի ցը
 բրդ բանալ, որ մմին մատու ո մի է և Յու
 նայ ձեռքն է : Աւանդութիւնը կրտուի ։ Ճե
 պրի վկայ շնուռած է, ուրտեղ Որկին մեր
 Յիշուռա Քրիստոս և երկու աւագակներն
 արդիւթիւնն մինչեւ չարչարանաց գոր
 ծիքներուն պատրաստուիլը : Երեք մա
 սերու կամ խորչերու բաժնուած է, ո
 րով բանատարկեալներն երեք անձինք ըլ
 լալին ցոյց կուսայ : Ներս չմուած, աջ
 կողմը դրանը քով վանդակի պէտ բան
 մի կը նշանաւի մեծկակ քարի մի միա
 յօք . և այս քարը երկու տեղոց ծոկեր
 տէնի գորուած . Յայնք այս տեղ մշտա
 վառ կանթեղ մի ունին ու կ'ըսեն թէ՝
 Յիշուռա Քրիստոսի բանտարկութեան
 ժամանակ իւր երկու ոտքերը այն քու
 րին ծակեցրուն մէջ դրան էին և առակի
 կողմէն երկուան իրարու հետ շըմպյան:
 Այս Բանարի Պանիքանով սիղան : Յիշնալ
 բանիտէն դուրս եղներով ու խոտաւ պարաց
 թափօրական հանդէսը, 12 մերդունեւ
 ապւորութեամբ . ձափո կողմէն կ'ինկնի
 սուրբք : Անելիքանութիւնուիրեալ Յիշնաց
 սիղանք : Ամիկայ էր, զուտ աւանդու-
 թեան գորկին մահուանէն յեւոյ նորա

առարք կողը նիղակով ծակոցը, ուսիէ բլիեց արիւն և ջուր, և սոյն սքանչելեաց վրայ հաւատաց Յիշուսի, և այս առդու եկաւ իւր գործած մեղաց վճայ ողբալու :

Գ. Հանդելյ բաժանման սեղան : Այսն կողմբ երիսւ մեղր հեռառ է Հայոց սեղանը : Այս սեղանին աեղը դահիճ ներթիթնց մեջ քամնեցին (Յիշուսի հագած հանդերձները, ըստ այնու Քամանեցին զհանդերձանորա պիճակաւ) ։

Դ. Առողի Լուսարդը Եկեղեցին : Քիչ մի յառաջ երթարուի նոյնուուղար թեամբ՝ քուռ մի կը աեսնուի անփեղկ, ուսիէ 29 առափճանաւա Հայոց առարք Լուսարդիք Եկեղեցին Կ'թշնուի : Երկու սեղաններն և առանձին գատով բառ նուռանեւ . ունիր և գեղեցիկ գմբեճեն մի չարս մարմարեաց սիւնի պիաց : Եկան գրեթե ամեն կ'ըստուի թէ առարք ։ Ունու առքից հայրն մեր հոռ եկամք ու քիչ մի ժամանուու մզնուն է ; պիստորոց և իւր անուանու նուարդուած է Խեցեղեցին ։ Ի՞ առդպ սեղանուու արթամբեանն հարգաւա կազմու այսպիկ պիստու հոռն մի կը աեսպնը Այսուհետք Առ 55.

սի, ուր տեղաց սրբուհին Հեղինէ ըստ
աւանդութեան, կ'աղօթէր, երբ իւր
հրամանաւը խաչափայոր գտնելու հա-
մար գետինը կը փորէին։ Այս տեղու ալ
հայոց սեփհական է, ուր մշտավառ ե-
րեք կրանքնեղ կը փառի։

Ե. Վի-Գ-Խաչ։ Եղին եկեղեցւոյն
հարաւակորմն եղած 13 սոք աստիճանն-
ներէն վար Վիւտ-Խաչի տեղը կ'իջնուիր

Յիսուսի թաղմանէն յետոյ նորա
չարչարանոց բողոք գործիքները ըստ առ
փորութեան Հրէից պէտք էր սր հողին
ուսկ թաղուէին, ուստի թէ խաչերն և
թէ միւս երկաթեղին գործիքները բե-
րին հու նետեցին որ վուս ու ամսյի տեղ
մի էր խաչերութեան տեղւոյն մօսու, և
հետպհետէ քաղքէն գուրս հանուան
աղբիւսով և աւերակներու կցաներով
ծածկուեցան։ Վրիստոսի 326 թուա-
կոնին սրբուհին Հեղինէ Ա. Գերեզ-
մանի և Վողդովմայի վկայ տնկուան ըստ
առւաճաց արձանները կործանելոց առջէն
յետոյ, առւդր։ Երուատղիմի Ա. ակար ե-
պիսկոպոսին որ ժամանակին պատրիարքն
էր։ և քաղաքին ծերանեաց հարցու-
փորձ լրաւ թէ ուր արդեօք կրնայ

գտնուիլ Քրիստոսի պրկաբործ սուրբ
 խաչափայտը : Այն ժամանակ Յուղայ
 Կիւրեղ որ ծերունեաց մին էր, սոյն տե-
 ղա նորաց ցոյց տուաւ, ուր տեղ վորել
 տալով, վերջապէս երկաթի գործիքնե-
 րին ու երեք խաչերը գանուեցան . բայց
 Քրիստոսի Տեառն մերոյ սուրբ խաչը
 որն ըլլալը յոյտնի չէր : Վակար հայ-
 րապետ տղօժք և հսկումն ընել տուաւ
 բոլոր հաւատացելց, որպէս զի ցոյց տոյց
 Աստուած ճշմարիտ խոտքը : Այն միջու-
 ցին հոգէվորքն հասած հիւանդ կին
 մի պատահեցաւ, ուստի սուրբ Հայրա-
 պետն ու Հեղինէ առին տարին երեք
 խաչերն ալ և կարգաւ հիւանդին . մար-
 մայն մօտեցուցին . ուղի երկուքը զօրու-
 թիւն մի ցոյց շտուին, բայց երրորդը
 մօտեցուցած ժամանակինին անմիջապէս
 բժիշուեցաւ մահուան դուռն հասնող
 կինը : Այն օրը սուրբ Հայրապետը նրկն
 ջեցեալի մի եւս պատահեցաւ որ թա-
 ղեցրա կը տպանէին, և նոյն ժարդը կը կ-
 նելով ճանչցաւ ճշմարիտ կենաց փայ-
 տը և անոր սրանցելի զօրութիւնը . բայ-
 սուամ երբ Քիառամի խաչափայտը միւս
 երկուսէն յետոյ ննջեցելով մարմարն

Թօնեցուցին . անսկիզապէտ յարութիւն
պատւ :

Զ . Չաղանաց սկզն կամ Փռշապահի
սիրան ։ Առարք լուսաւորչի եկեղեցին
դրւբս Ելելով և գարծեալ ձախ թերամին
փայ կը տեսնաւի Յաւնաց սեղանոր, ու
րուն միջավայրը երկաթեայ վանդակի
մը մէջ կը պարունակի Հագանաց սիւնին
մէկ մասը, որ գորշագոյն կրանիթեայ
սիւնի մը կառք է, և ըստ աւանդութեան
Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասոր փայ
նասեցուցին երբ փշեայ պատկալ կը պառ
կէին, թշնամաննելով և նախատելով Պիտ
ղատոսի տանը մէջ, ու ակէ յետոյ հոս
բերուեցաւ յիշեալ սիւնը :

Է . Առաջ Գողգոթա : Ասկէց քսան
քայլացափդէպ ՚ի ձախ գին քառաջանա-
րս, Գողգոթային կը հասնինք, ու սկսց
18 տար աստիճաններէ վեր կ'ելնուի :
Հու է ։ ։ Խաչին պնկուած տեղը, պայ
մերայ բարձրացաւ Որմին աշխարհի :
Այս պրապէսյրը որ Հայոց անփական
եք, և 1422 թուբին Ա բացիք յափշաւ-
կեցին պայման Յաւնաց անոքնէ, ուր

Տապահման սիրան Պողոսիտացի ձախու-
իոցմինի պահին կը պատինաց ձեռքնէ, ուր

ըստ աւանդութեան կը կարծուի թէ
Յիսուս Քրիստոս խաչի վրայ տարա-
ծուած գամուած տեղն է :

Ը. Պատանապէջ : Դաղդոթայէն վար
իշնելով, անմիջապէս դէպ 'ի ձախ կողմուն
դիմացնիս կ'ենէ Քրիստոսի պատանուած
տեղը, որ ոռւրբ Յարութեան տաճա-
րի դիմացը կ'ինկնի : Այս տեղս
կարմրուգոն գեղեցիկ քառանկիւնի քա-
րով մի ծածկուած է. Երկու կողմը մեծա-
դիր աշտանակներ կան երեք ազգաց,
այսինքն՝ Հայոց, Յունաց և Աստինաց,
և քարին վրայօք կարգաւ խոշոր և միա-
նեսակ կանթեղներուն վարի ծայրը կախ-
ուած պղնձին վրայի գիրերը ցոյց կու-
նուն որ ազգին ըլլալը : Այն ժամանակ
այս սուրբ տեղս գեղեցիկ նողացիով
զարդարուած էր :

Յովեէփ Արեմաթացի և Նիկողո-
մոս Յիսուսը խոչէն վար առնեխնէն յե-
տոյ այս տեղս բերին պառկեցուցին,
որ անշուշտ հարթ ու հաւասար տեղ
մի էր . և օծելով ոռւրբ մտրմինը՝ սլա-

տեղին մաքուր կտաւով ըստ սովորութեան Հրէից :

Թ. • Ո-ժախակման պեղը : Ըստ աւանդութեան, Արփամ սուրբ Կյոյն այս տեղաց տեսնելով առաջին անգամ իւր միածին Որդին խաչին վերայ բարձրացեալ, ուժաթափ եղած մարեցաւ և հետն եղող սուրբ կանանց թեւերուն վրայ ինկաւ : Կամ ըստ այլ աւանդութեան, այս տեղ կայնած էին սուրբ կունայք, երբ Յովանէփ ու Նիկոդեմոս Քրիստոսի սուրբ մարմինը մաքուր կտաւներով կըպատէին : Յիշեալ տեղը Հայոց սեփական է, երկաթի ու բողոքակ ճաղող շրջապատուած ու վրան ջահմի կտախուած : Այս ճաղիս քովի աստիշ ճանաները Հայոց վերնատունը կը հանեն :

Ժ. • Ի-շբերից տղան : (Յիշեալ տեղէն քանի մի ոսք դէպ ՚ի աջ դին կամարին տակովն է Իւղաբեր կանանց սեղանը, որ Հայոց ազգին է : Այս տեղս եկան յիշեալ սուրբ կանայք միաշաբաթի (Կիւրակէ) առաւօտուն Յիառուսի մարմինը ինկելու, որ արդէն յարութիւն առած էր :

ԺԱ. Առարի Գերեզման դրիշնա Իւղաբերից

սեղաննեն վեց մետր անդին նօրսաշխն ուն
գմբէթի մի տակ և կլորաձեւ սրահակի
մի մէջտեղը կը տեսնուի Տեառն մերոց
Յիսուսի Քրիստոսի Գերեզմանը, եւ
ընդհանուր քրիստոնէից միակ երկպա-
գելի սուրբ աեղը :

Այս գերեզմանը երկու պատիկ խոր-
շերով բաժնուած ու ժայռի մէջ գոր-
ւած էր, առաջինը երկրորդին իրը գա-
սիթն էր, ուրիշ անցնելով երկրորդ
խորշը կը մանուէր, ուր տեղ կար քարի
մէջ վարուած մասւրի նման փոս մի, որ
վիմափոր կամար մի եւս ունէր : Հե-
ղինէ թագուհին սոյն ասճարը շինած
ժամանակ գեղեցիկ զարդարելու հա-
մար Գերեզմանին հին ու բնական ձեր
աղակերպեց. մինչեւ 1808ին քանի մի ձե-
ւերու մանելին յետոյ, միշտալ թուտ-
կոնին այրեցաւ սուրբ Յարութեան
տաճարը, որ ըստ մէծի մասին տախտա-
կեղէն էր, Գերեզմանն ալքիչ շատ վը-
նասուելով, Բարձրագոյն Դրան կողմէն
նոյն ժամանակ Յունաց արածնութիւն
որուեցաւ տաճարը նորոգելու, որոնք
գրեթէ առանց առջի ձեւը փոխելու՝
մարմարեց քարերով և քանդակներով

զարդարեցին յունական մերժագիրներովք
Հարգեհէն առաջ Գեղեզմանի շրջապատ
տին վրայ հայերէն գիրեր ալ գտնուիլը
ճերունի միաբանիք կը վկայեն :

Ա. Գեղեզմանի դուռը դէպ ՚ի արեւ
և լը կը նայի , ուսկէ կը մոցուի առա-
ջն խցեակը , որու մէջտեղ կանգնած
կը պեսնուի մարմարեայ սիւնաձեւ քար
մի որ Նրեշտակի տար կը կոչուի : Այս տեղս
է սուրբ Աւետարանի Յանոսի ըստած
աեղք , ուր կանգնած էր հրեշտակին մէկը
սպիտակ հագուած : Այս մատուռին
մէջ 15 հատ մշուավառ կանմթեղներ կան ,
մէջտեղի 5ը լատինաց է , աջակողման
5ը Յունաց , ձախ կողման 4ը Հայոց և
մէկ հատ Խոպաւոց : Այս մատուռին
մէջէն երկրորդ դրով մի կը մոցուի Ա .
Գեղեզմանը , որու մեծութիւնը թէ ըստ
նութեամբ և թէ երկայնութեամբ եր
կու մեղքի չափ է : Երջապատերուն
մարմարներուն տակը դեռ կը աեմնաւի
բուն Գեղեզմանի բնական ժայռ քարե-
րը , զաք սբբուհին Նեղինէ աաշել
ու կոկել առաած էր Օսքապիա մարգա-
րէի Գեղեզմանին նման , որուն համար
յետք պիտի խօսիք : Բրիստուի Տեա-

ուրն մերոյ բունքնարանի տեղը հիւսիս
սայ կողմն է , ժայռին մէջ փորուած , ո
րուն կողերն և վայի կողմը ձերմակ մար-
մարիոններով ծածկուած են , այնպէս որ
բարեպաշտ ուխտաւորք ներս մտնել-
նուն՝ բնականէն մնացեալ բան մի չեն
տեսներ , բաց ՚ի մարմարէ , պատկեր
ներէ և կանթեղներէ : 45 կանթեղ կը
վառին մշտավառ , իւրաքանչիւր ազգ՝
Հայք , Յոյնք եւ | ատինք 13 ական
հատ ունին , իսկ Խպաիք 4 հատ :

|| . Դերեզմանի ներքին կողմը հիւ-
սիսային դին երեք մասի բաժնուած է
և երեք ազգաց կը վերաբերի . մէջ տեղը
Յունաց է , որոնք մարմարի վրայ քան-
դակուած . Դիխտոսի յարութեան պատ-
կերն ունին . աջ կողմինը Հայոց , և ունին
յարութեան պատկեր մի նկարուած
կոտաւի վրայ . ձախ կողմինը | ատինաց է
Կոյն օրինակ պատկերով զարդարած : || .
Դերեզմանի դրսի դրան երկու կողմե-
րը քարաշեն քարձրկեկ նստարանի պէս
աեղեր չինուած են , որոնց վերայ կան
Յունաց կճեայ աշոանսակները կերոնա-
բարձ , և ետեւի կողմերն են Հայոց և
| ատինաց պղնձէ մեծ աշտանակները ,

որոնք հանդեսներու և պատարագի ժամանակ կը վառեն : Իւրաքանչիւր սղգունիք երկերկու զցգ՝ մին մեծ և մինքից մի փոքր : || . Գերեզմանի արտաքին դըրան ճակաբին լիայ դարձեալ սուրբ Յուրութեան պատկերներ կան . անմիջապէս դրան վրայինը Նայոց է , երկրորդն է Յունաց՝ և մարմարի վրայ քանդակուածն է . երրորդն է Լատինաց՝ կտաւի վրայ նկարած , որոնց առջեւ մշտավառ կանմեղք կը վառին : || Եր պատկերին առջեւինը սուրբ Լուսաւորչի կան թեղ կը կոչուի :

Այս սրբավայրերէս դուրս թէպէտուրիչ սուրբ առջեւ ևս կան , առաւելի ամ նուազ յարգանաց արժանաւոր , այլ թափօրիւ պարտերու սովորութիւն չունին Նայք . իւրաքանչիւր բարեարսշտ անձն կրնայ առանձինն պալսել ծանօթը ընկերի մի հետ և իւր հետաքրքրութիւնը լեցնել :

Ասոնք են միւս տեղերը .

Ա . Սուրբ Գերեզմանի կից արեւամտեան կողմը խպաւոց սեղանը , սր սուրբ Լուսաւորանին ՚ի անդից կոչուած տեղն է , ուր տեղ նստած էր միւս հը-

բեշտակը և աւետիս առւաւը իւղաքեր
կանանց “Չէ ասու, այլ յարեաւ ո ը-
սելով։” յս սեղանիս յառաջագոյն չա-
յոց եղած է, ինչպէս կը վկայէ Հաննէ
վարդապետ⁽¹⁾, և կ'ըսէ թէ Հեթում
թագաւորն շինել տուած է։ Ժամա-
նակէ յետոց այ սեղանա խալուոց տա-
լով, նորա գոխարէն Արքիպառս ուրիշ
եկեղեցի մի առած են մերայինք։

Բ. Այն մատուռին գիմնացը գուռ
մի կայ որ երեք խորչի կամ խօցի բաժան-
ւած է մէջ առ մէջ. առաջինը նախա-
գաւիթ մի է ուր տեղասահմաններ կան,
և վերը չայ ժամարար միաբանից նըն-
ջարանն է. երկրորդ խորչը մատուռ մի
է ուր տեղ Աստրիք կը պատարագեն.
Երրորդը գրեթէ ժայռի մէջ փորուած
մութ տեղ մի է քանի մի մանր և ան-
կանոն խորչերու բաժնաւած ուր առանց
լցուի անհնարին է մտնել. և այս տեղս
է Յովսեփայ արեմաթացւոյն գերեզմա-
նը։ Ա ասն զի ըստ աւանդութեան այս
սուրբ անձը իրեն համար փորած գե-
րեզմանին մէջ Յիսուսը թաղելէն յե-
տոց, փափաքեց որ ինքն և իւր ընտա-

(1) Հաննէ. պատմ. Ա. Երաւաղէմի, Երես 206.

Նիքն ալ նորա գերեզմանին մօտ տեղ
մի թաղումին . ըստ որում նոյն գետինը
իրեն սեփական կալուածն էր , ուստի
սոյն խորշերը այս նպատակիս համար
փորել տուած էր : Յիշեալ երեք մասե-
րըն , որ Յովեկի արեմանացի կը կոչուի ,
Հայոց սեփական է , և Ասորոց թօյ
լատրած են պատարագելու : Հաննէ
վարդապետի ժամանակ ամեն չորեքշաբ-
թի օրերն հոս կը պատարագէին մերա-
յինք , և սեղսնը նուիրեալ էր յանուն
սուրբ Աստուածածնի⁽¹⁾ :

Գ . Նոյն տեղէն ենելով և գէալ ՚ի
ձախ կողմը յառաջ երթալով և Պերեզ
մանէն գրեթէ 12 մեդր հեռու կը տես-
նուի] ատինաց սեղանը]՝ արիամայ]՝ ադ-
դաղենացայ անուամբ , որ ըստ մեզ Պար-
փէն կը կոչուի . ըստ որում Յիսուս այս
տեղ պարտիզպանի կերպարանքով երե-
ւեցաւ]՝ արիամու]՝ ագդագենացւոյ ,
որ երբ ձայնէն ճանճնալով քովը երթալ
կ'սւզէր , ըսաց Յիսուս . “]՝ մօտե-
նար ինձ , վասն զի գեռ Հօրս քով եւ-
լած չեմ . այլ գնա իմ եղբարցս ըսէ ,
թէ ես իմ Հօրս և ձեր Հօրը քով պիտի

(1) Հաննէ . պատմ . Ա . Երաւհագէմի . յեր . 205 .

ելնեմ, իմ Աստուծոց և ձեր Աստուծոյն՝⁽¹⁾։ Այն պարտէզին վրայ երկու մշտավառ կանթեղ կան, մին Հայոց և միւսն ատինաց, ըստ որում երկու կան թեղն ևս նախ Հայոց էր և 1631ին Պարոնտէր կոչուած Դրիգոր պատրիաքքը կանթեղին մէկը և երգեհոնի կից եղած խուցը և ատինաց տալով, նորա փոխարէն Վերնատնէն երեք կամար առած և մեր եկեղեցին դէպ ՚ի երկայնութիւնըն ընդարձակած է :

Դ . Երեման Տապուռ : Պարտէզին հիւսիսակողմի աստիճանով վեր կ'ելնուի և ատինաց եկեղեցին : Եւ պարտիզին համար ինչ մեկնութիւն որ տաւինք վերը, և ատինք սոյն եկեղեցւոյ տեղւոյն կուտան, հոս երեւցաւ ըսելով Յիսուս Ո'ագդաղենացւոյն, վասն որոյ և եկեղեցւոյն անունը Երեման կը կոչեն : Այն եկեղեցիէն դուրս ելնելուն՝ ձախ կողմը դուռ մի կայ՝ որ է աւանդատուն, և ասոր մէջէն ճանապարհ ունի դէպ ՚ի և ատինաց վերնատունը ելնելու, որ սուրբ Դերեզմանի վրայ կը նայի :

Ե . Առանց սեղանը : Պատանատեղ
(1) Յուլիոս 10. 17.

ւոյն դիմացը դուռ մի կայ, որ գէպ ՚ի
Գողգոթայի տակը կը բացուի : Ներս
մսնելու ժամանակ աջ կողմը քարէ շե-
նուած բարձրկեկ տեղ մի կը տեսնուի,
որու համար Ա ատինք կ'ըսեն թէ խա-
չակրաց առաջին թագաւոր Կոտըֆը-
րուայի գերեզմանն է, որ 1099 ին տի-
րեց Երուսաղէմի : Զախ կողմը առաջ
նոյն նման երկրորդ քար մի կայ բարձր-
կեկ, և այս ալ նորա եղաօր Պոտուէն
անուն թագաւորի գերեզմանն է, որ
1113 ին մեռած է : Այս երկու գերեզ-
մանները 1808 ի կրակէն առաջ դուրսն
էին, յետոյ երբ Յոյնք նորոգելու ար-
տօնութիւն ստացան՝ ներս առին զա-
նոնք ընդարձակելով Ադամայ մատու-
ռը : Պատանատեղւոյն դիմացը գէպ ՚ի
հիւսիսային կողմը պատին կից Եղող եր-
կու կարգ աստիճաններուն տակն աղ-
խոչակրաց ուրիշ իշխաններու տապան-
ները կան կ'ըսուի :

Ադամայ մատրան ներսի կողմը պղզ-
ափ փոս մի կայ, ուր տեղ ըստ աւան-
դութեան՝ նախաստեղծ մարդոյն գըլ-
խոյն տակորը գրուած էր : Այս տեղաց
կ'երեւի նաեւ Պողգոթայի վայ խա-

չափայար անկած ժայռին ճեղքուածը:

Զ. Ասկէ ելնելով և Աւժաթափանան տեղը գալով դուռ մի կայ, ուր աեղէ Հայոց տեսուչ վարդապետին սենետակը, և դրանը քովի աստիճաններէն վեր ելնելով, որ երեք մասերու բաժնուած է, վերնատունը կը հասնի, որ Հայոց սեփական է բոլոր մասերովը։ Հոս կայ եկեղեցի մի երկրորդ Գողգոթա անուամբ, ըստ որում յիշատակարանք կը պատմեն թէ։ Վարտիրոս պատրիարք Ա բայ հետ չկարենալով գլուխ ելնել, որոնք 1422 էն մինչեւ 1431, քանի մի անգամ Հայոց ձեռքէն յափշտակեցին զոռւրբ Գողգոթայն Եղիպատոսի սուլտանը և մեծամեծները կաշառելով, վերջապէս յուսահատեալ այս տեղս խնդրեց ուստացաւ արծաթով յիշեալ սուլտանէն։ և յետ դառնալուն յատուկ եկեղեցի մի շնեց 1431 ին և երկրորդ Գողգոթա կոչեց, որովհետեւ Ճիշդ Գողգոթայի դիմաց կ'ինձնի։ Յառաջադրոյն այս տեղս թագաւորաց հանգստարան էր կ'ըսուի, և հոս կը բնակէին թագաւորք և թագաւորացունք ուխտի եկած ժամանակնեմ։

Այսն եկեղեցւոյս դէպ ՚ի արեւելեան
հարաւակողմը ուրիշ մատուռ մի եւս
կայ, Արտվառուր սուրբ Աստուածածիկ ա-
նուամբ : Յիշեալ մատրան սեղանին
ետեւը դուռ մի կը տեսնուի որ սեղա-
նատուն կը հանէ և հոյակապ գեղեցիկ
պատուհան մի ունի դէպ ՚ի սուրբ Յա-
րութեան տաճարի արտաքին մեծ դը-
րան և բակին վկայ : Այս չէնքս, ինչպէս
նաեւ սուրբ Ուստաւորչի Հայոց եկե-
ղեցին, 1808 հրդեհին ժամանակ անլո-
նաս մնացած են :

Առաջ ՚ի երեղմանի արեւելեան դին
և տաճարին գրեթէ մէջ տեղը եկեղեցի
է Յունաց ձեռքը և հարուստ զարդա-
րանք ունի . ոմանք տգիտաբար Աշխար-
համատուռ կը կոչեն այս մասը միայն,
փոխանակ ամբողջ Տաճարն իմանալու-
սոյն անուամբ, ըստ որում բոլոր քրիս-
տոնէից տիեզերական և համաշխարհա-
կան մայր եկեղեցին է սուրբ Յարու-
թեան տաճարը, ուր կը համախմբին ա-
մեն տարի ամեն ազգէ և ամեն կրօնքէ
խառն հաւատացեալք Յիսուսի ՚Քրիս-
տոսի Յարութեան առարք խորհուրդը
աօնախմբելու : Յունաց յիշեալ եկե-

զեցւոյն մէջտեղը տնկուած քար մի կայ,
որու համար Յօյնք միամտաբար աշ
խարհիս կեդրսնը կ'անուանեն :

Առւրբ Գերեզմանի տաճարի շրջա-
պատէն դուրս , մեծ դրանը ձախ դին
քանի մի աստիճաններով բարձր՝ փոքրիկ
միստուռ մի կայ | ատինաց յանուն որ-
գառը սուրբ Աստուածածնի , որ կից է
Գողգոթայի , և պատուհան մի ունի , ո-
րոյ համար Գողգոթայի դուռն էր կ'ը-
սուի յառաջագոյն :

Յիշեալ | ատինաց մատրան տակո-
վը Յօյնք փոքրիկ մատուռ մի ունին
յանուն սուրբ Աստուածածնի որ Հապե-
չից էր , և մեր ձեռքն անցնելէն յետոյ
Յօյնք յափշտակեցին Աստուածատուր
պատրիարքի ժամանակ : Իսկ հիւսիսա-
յին պատի մէջ արտօքին գաւթին վը-
րայ Խպտիք փոքրիկ եկեղեցի մի ու-
նին յանուն Ա . ԱՌայէլք , որու մէջէն
աստիճանով վեր ուրիշ եկեղեցի մի կ'ել-
նուի . անկիւ ալ ուրիշ դռնով մի Հա-
պեշից վանքը և սուրբ | ուստաւորչի
կամ Գիւտ-խաչի տանիսն կ'ելնուի :

Այս սեղէն 6 կամ 7 մեդր դէպ ՚ի
հաքաւ Հայոց սուրբ Յովհաննու ա-

ևետարանչի. մաստուռը կայ երեք սեղաւնով. աջակողմեան փոքր սեղանին մէջ կը գտնուի չարչարանաց սիւնին մէկ կտորը, զոր հաւատացեալք ջերմեռանդութիւնը կը համբուրեն. ՚ի յիշատակ չարչարանաց ՚իրիատոսի. ՚նկէ ալ ՞ մեղք անդին Յունաց Հայր Աքրահամու վանքն է, որու մէջ կայ ժբ. Այս եկեղեցւոս կից կայ ուրիշ փոքրիկ մատուռ մի ևս, որ ըստ աւանդութեան Աքրահամու իւր Իսահակ օրդին զրհելու տեղն է : Այս վանքն ալ Հապէջից ըլլալով, յառաջ Հայոց ձեռքն էր :

Իսկ Ա. Յարութեան աւագ գրան աջ կողմը հին զանգակատունն է, որ հիմակ աւերակ է: Ասոր ներքեւը դուռ մի կայ Յունաց սուրբ Յակոբ եկեղեցին մանելու, ուր տեղ ուրիշ քանի մի անհան մատուռներ եւս կան :

Կոնք են աւատիկ սուրբ Յարութեան տաճարի մէջն և դուրսը եղած երկրպագելի և նշանաւոր տեղուանքը : Տէրունական ուխտաւոքը նոյն գիշերն հոն մնալով և յիշեալ ներքին սրբավայր ուրը ուխտ և երկրպագութիւն ընելէն

և լ]. գերեզմանի վայ մտառւցաւած
անմահ []. Պատարագին ներկայ գըտ-
նուելէն յետոյ, հեաեւեալառաւոաւն
դուռը բացուելով իւրաքանչիւրոք կը
գտունայ ՚ի սուրբ Յակոբ և հանգիստ
կ'առնաւ : Յետ այնորիկ կրնայ ինքը ա-
ռաջնորդ մի իւրեան գտննելով, որուեց-
նայ առաւելապէս ծառայել և սոյն գիր-
քըս, շրջագայիկարգաւ բալոր սուրբ և
նշանաւոր տեղիքը թէ՛ սուրբ քաղաքին
մէջ և թէ անոր բոլորտիքը պարապին
մօտ եղած աեղերը, որոնց տեղագրու-
թիւնը հոս պիտի ընենք :

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Խաչին ճանապարհը մինչեւ ՚ի գերեզման
ամենատուրբ կրուին :

Տէրունական ուխտաւորքքառնի մի
օր հանգիստ առնելէն յետոյ կը փափա-
գին այցելութեան և ուխտի երթալ
Վատուածամօր սրբոյ կուսին գերեզմա-
նին, որ քաղաքէն դուրս արեւելեան
կողմը կ'ինքնի Դէմսեմանի ըսուած ձու-
րին մէջ : Եւ երկու ճանապարհ ունի եր-

թաղու , մէկ մի .քաղքին մէջէն անցնեւ
լով և սուրբ Ատեփաննոսի կամ սուրբ
Աստուածածնի ըսուած դռնէն դուրս
ենելով , երկրորդ՝ Ախօնի կամ Փրկչի
դռնէն և պարսպին տակովն երթալոյի .
այս Ճանապարհը քիչ մի հեռու է , իսկ
սովորական Ճանապարհն . առաջինն ըլ-
լալով , մենք եւս անկէ առաջնորդենք
մեր բարեպաշտ ուխտաւորացցոյց տա-
լով նոցա Խաչի ճանապարհի (1) վրայ գրտ-
նուած սուրբ տեղուանքը :

Եւ որովհետեւ սոյն Ճանապարհը
Պիղատոսի պալատէն մինչեւ 'ի Գողգո-
թա կը վերջանայ , ուստի մենք ալ աս-
կէ սկսելով շարունակենք մեր հոգեւոր
այցելութիւններն ամենայն ջերմեռան-
դութեամբ :

Եւաւոտ կտնուխիեկ սուրբ Յակո-
բայ վանքէն ենելով և դէպ ՚ի աջ կողմը
ծուռելով՝ կը հասնինք սովորական Ճա-
նապարհով մինչեւ սուրբ Յարութեան
եկեղեցւոն դրսի բակը , ուր բանի մի

(1) Խաչի ճանապարհ կոչեցինք , զոր Լատինք յատ-
գին ճանապարհ կը կոչեն . այն փողոցները ուսոկէ քրիս-
տոս խաչն ուսոր Պիղատոսի պալատէն հանուելով
մինչեւ Գողգոթա բերուեցա .

օր յառաջ կատարեցինք .մեր այցելու
թիւնները : Ի՞ակին արեւելեան կողմի
դանէն դուրս ենելով, ապրջան ծա-
խող վաճառականաց փաղոցին մէջ աջ
կողմը հին կամարադուռ մի կը տեսնե
ւի : Այս տեղա շատ տարի չէ կաշ-
գործներու գործարան էր, և հին ժա-
մանակ սուրբ Աստուածածնի անուամբ
եկեղեցի կար : Հիմակ երկու տարի է
որ Ի՞րուսից տէրութիւնը առած է (ա-
մանեան կառավարութենէն, և մօտերս
պիտի սկսի մեծ շէնքեր շինելու . ար-
դէն սկսած են փորել և յատակը մաքրել
ուր շատ հնութիւններ և շինութիւններ
կը գտնուին . ամբողջ հին եկեղեցին
յայտնուած է, և հոն ազօթատեղի .ը-
րած են առ այժմ Ի՞րուսիացիք :

Այս դրանք առջեւէն անցնելով ճա-
նապարհը երկուքի կը բաժնուի, աջ
կողմինը պղնձագործաց և մսավաճառաց
մեծ շուկայն կը աանի . մենք պէտք է
դէպ 'ի ձախ կողմի ճանապարհը ուղ-
ղուինք . և քիչ մի յառաջ երթալով ճա-
նապարհը կը ծռի դէպ արեւելք և յե-
տոյ դէպ 'ի հիւսիս՝ որ կը հանէ մութ
շուկայն : Յիշեալ շուկային կամարին

բերանը, ձախ դիմ աւերակ տեղ մի
կ'երթւի բարձր, ուր տասւերկու աս-
տիճանով վեր կ'ելնուի, ոյս տեղս էր
կրտսանդիանոսի ժամանակ սուրբ (Յո-
րութեան տաճարի նախադուռը, ուր
տակաւին երկու սիւները կանգուն կ'ե-
րեւին. և հիմակ ճանապարհ մի է դէպ
'ի վեր, ուսկէ կ'երթուի Խապտւոց նո-
րաշեն վանքը և Հապէշից վանքը և ու-
կենր ըսուած սառնիճը, որոնց վրայօք
ուրիշ անդամ կը խօսինք :

Ա. Աի-ն դապավճոյ : Ա, ախտդուռէն
դէպ 'ի մութ շուկայն յառաջ երթարով,
անոր ծայրը չորեքուղի ճանապարհ մի
կը հանդիսպի . դիմացի ճանապարհը
քաղքին 'Իամասկոսի ըսուած դուռը
կը հանէ, ձախ կողմինը դէպ 'ի (Յու-
նաց և Լատինաց վանքերը, աջ կողմի-
նըն է Խապէշի ճանապարհը : Այս ճամ
բուս բերանն է Աի-ն դապավճոյ ըսուած
սիւնը, և ըստ աւանդութեան՝ Տեա-
ռին մերոց (Յիսուսի Քրիստոսի մահ-
ւան վճռոյն յայտարար թուղթը այդ
սեան վրայ կպցուցին : (Յիշեալ սիւնը
խանութի մի մէջ տնկուած է, որուն
կամարէն վեր կը բարձրանայ և 7—8

մեզը երկայնութեամբ կը տեսնուի :

Բ. Դադոսպանի դուռը : Այսոք գիմնացը իր 15 քայլ հեռի է Դադոսպանի դուռը, ուսկէ Յիսուս Քրիստոսը խաչն ուսր շալիած դուրս հանեցին : Կը կործուի համարակօրէն, որ ՚ի մահ գատասրթը տուած ամեն անձինք այս գոնես դուրս կը հանուեին տանջանարանը աարուելու համար :

Գ. Ի՞երենիկեայ պոանը : Յիշեալ տեղէն դէպ ՚ի աջ կողմի ճանապարհին մէջ յառաջելով 60 մ. դրի չափ, աջ թեւին վերայ պատին մէջ տեղաւորաւած սիւն մի կ'երեւի . այս տեղւոյս համար կ'ըսուի թէ սրբուհւոյն Ի՞երենիկեայ (Ա երոնիքա) տունն էր, որ Քրիստոս խաչն ուսը անցուցած ժամանակին չդիմանալով նորա քաշած նեղութեանը, համարձակեցաւ քսկը մօտենալ և երեսէն վազած քրտինքները պրբել :

Դ. Պիշտոռին կամարը : Խոյն ճանապարհը շաբունակելով՝ երկու ուղի կ'ելնէ դիմաց, մին դէպ ՚ի ձախ կողմ, միւսը դէպ ՚ի աջ : Դէպ ՚ի ձախ կողմի ճանապարհը յառաջ երթալով անցքը կը լայննայ, և դիմացդ անկիւնագլուխը նոր դուռ

մի կ'ելնէ, այս տեղէ Աւտորիսցւոց հիւ-
 րանոցը և նորաշչն մատուռը։ Ասոր
 հանդիպակաց կողմի անկիւնագլուխը
 հին բաղնիք մի կայ, զոր Հռովմէական
 Հայք ծախու առած են, և անոր պա-
 տին տակովը փողոցին վրայ մնարմարա-
 սիւնի մեծկակ կտոր կ'երեւի. այս տեղս
 հասնելով Յիսուս, կ'ըսէ աւանդու-
 թիւնը, և խաչին ծանրութեան տակ
 ընկճուած ըլլալով Ախոնն կիւրենացւոյն
 պատահեցան, և բռնեցին զինքը որ
 խաչը նա տանի։ Յառաջ երթալով դէպ
 'ի աջ կողմի փողոցին մէջ, ձախ դին
 կ'երեւի նորաշչն մատուռ մի և անոր
 կից Դաղղիացի Ախոնի Տիկնոյք լառւած
 մայրապետաց վանքը։ Այս վանքին կըռ-
 թընած հին կամար մի կայ փողոցին վր-
